



**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**


**ՀՐԱՄԱՆ  
ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՆԱԽԱԳԱՀԻ  
ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՁԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 15.03.2018թ.-ի N 272-Ն որոշման 1-ին մասի 1-ին կետով հաստատված N 1 Հավելվածի 1-ին և 2-րդ կետերը՝ հրամայում եմ.

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի իրավաբանական և վարույթների վարչության պետի պաշտոնակատար Սյուզաննա Ստյոպայի Պողոսյանին նշանակել՝ որպես ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ:

2. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձի տվյալները հրապարակել Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝  Ա. Խուդավերդյան  
2019թ. 26 մարտի  
Երևան Հ-6